



թ. 19 Աստուածաշունչ Ոսկան վ.ի, էջ 570.



թ. 20 Տաղարամ 1722ի, էջ 84.
Ստորագր. Գ. վերև աջակողմը՝ պատուհանին մէջ.

ալ առ այժմ մութ կը մնայ ինձի. և սակայն այդ փաստն ալ կրնայ նշանակալից ըլլալ Ոսկանի տպարանին վախճանին պատմութեան համար¹:

Նոյնպէս 1752էն առաջ 1734ին Կ. Պոլիս հրատարակուած Յովհաննէս Հաննայի Երուսաղէմի Պատմութեան 10 էջին վրայ կը գտնենք յար և նման պատկերը Ոսկանին էջ 462ին պատկերին (աստ թ. 22): Արհեստական մանրակրկիտ ըննութիւն մը ինձի հաստատեց թէ 1734ի տպագրութեան մէջ գործածուածը նոյն իսկ 1666ին Ոսկանի յԱմստերտամ տպագրութեան մէջ գործածածն էր, միայն թէ Կ. Պոլսոյ տպագրութեան մէջ գործածուելու



թ. 21. Աստուածաշունչ Ոսկան վ.ի, էջ 499-
Գործածուած է նաև Կ. Պոլսոյ 1752ի Գիրք եռամսնեայի մէջ.

1. Ինձի կը պահէր Պետրոս Լատինացիի ի բողոք Պեկոյի 1705ին հրատարակած Աստուածաշունչը Ոսկանեան մանր գիրերով, պատկերագրող, բայց անյարոյ տպագրութիւն՝ արուեստի տեսակետով, ինչպէս որ թէպէտ զի կը վկայէ (Տիպ ու Տառ, էջ 60): Պետրոս ազգական է եղած Ոսկանի՝ որմէ ստացնր է եզեր անոր տպարանին մէկ մասը: